ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Ղուկասյանին

05. 02. 2019թ

N - 30

Կից Ձեզ եմ ներկայացնում Ձորագյուղ համայնքի ղեկավարի թիվ 03-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ:

Համայնքի ղեկավար Ա. Ռամազյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**25 հունվարի 2018թ ԹԻՎ 03-Ա**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ՝ 06-066-0001-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռ. Ամիրջանյանի որդի Ավետիս Ամիրջանյանի անձնական դիմումը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ. թիվ 1 որոշումը, <<Գ.Վեքիլյան >> ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով կադաստրային քարտեզի՝ 06-066-0001-0003 ծածկագրի տակ գտնվող 0.2755 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1925թ. կառուցված 19,95քմ. մակերեսով բնակելի տան, 1925թ. կառուցված 36,12քմ. մակերեսով բնակելի տան, 1925թ. կառուցված 17,32քմ. մակերեսով բնակելի տան,1925թ-ին կառուցված 10,71քմ. մակերեսով բաց պատշգամբի, 1925թ-ին կառուցված 26,64քմ. մակերեսով անասնաշենքի նկատմամբ՝ ճանաչել Ռոզա Խաչատուրի Ամիրջանյանի /ծնվ.1948թ/, սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինարարական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված 0. 2755 հա հողաման անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել և օրենքի ուժով ճանաչել Ռոզա Խաչատուրի Ամիրջանյանի /ծնվ.1948թ/ սեփականության իրավունքը:
4. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ձորագյուղ համայնք 9-րդ փողոց, 22-րդ բնակելի տուն:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Ռամազյան